

Հարցաշարի գնահատման չափանիշները

XI դասարան

- 1-ին հարց՝ 1,3-ը՝ 0,5, 2-ը՝ 1 միավոր, 4-ը՝ 2 միավոր
- 2-րդ հարց՝ 2,3,4, 5՝ 0,5-ական, 1,6-ը՝ 1-ական
- 3-րդ հարց՝ յուրաքանչյուր ենթահարց՝ 1 միավոր
- 4-րդ հարց՝ 1,2,3,4,6՝ 0,5-ական, 5՝ 1,5 միավոր
- 5-րդ հարց՝ 1,3՝ 1-ական, 2՝ 2 միավոր

Հարցաշարերի պատասխանները

XI դասարան

1.«Թմկաբերդի առումը» պոեմը գրվել է 1902- աշնանը, երբ Թումանյանը բուժման նպատակով գտնվում էր Աբասթումանում: Հենց Ջավախքի ասացողներից էլ Թումանյանը լսում է Թմուկ բերդի պատմությունը և, հարազատ մնալով ասքին, հյուսում է սիրո, կյանքի, գործի անմահությունը քննող այս չքնաղ պոեմը:

Վերնագրել է առումը, ոչ թե գրավումը կամ նվաճումը, որովհետև կռվով հաղթել չկարողացող Նադիր շահը նենգությամբ, խաբեությամբ տիրանում է անպարտելի բերդին, բայց չի կարող հաղթողի հպարտությամբ դիմավորել արյունոտ արևածագը, քանի որ դավաճանությունից ու փառասիրությունից սթափվելով՝ Թմկա տիրուհին նրա երեսին է շարտում փոքրոգությամբ, վախկոտությամբ, նենգությամբ ձեռք գցած « հաղթանակը»՝ դրանով իսկ անմահացնելով իր սերը «բարձր ու ազնիվ» տղամարդու նկատմամբ.

Քաջ էր ու սիրուն քեզնից առավել,

Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա,

Կնոջ մատնությամբ ամրոց չի առել,

Չի եղել կյանքում երբեք խաբեբա...

Մնացյալը՝ մասնակիցը:

2.Լևոն Շանթը հայ գրականության ամենափնտրված, անենահոգեհարազատ դեմքերից է, որոնց հետ յուրաքանչյուր հանդիպում հոգու և մտքի բախում է՝ ալեբախումներով ու խաղաղ հանդարտությամբ: Նա խորհրդապաշտական, գաղափարապաշտական գրականության հետևորդներից է՝ իր յուրահատուկ ոճով, պատկերներով, անսահման երևակայությամբ, որ շաղախված է ժամանակի հրամայականով: Պարտվել էր ռուսական առաջին հեղափոխությունը, բանտերը լցված էին հեղափոխականներով, տիրում էր համընդհանուր ընկճվածություն, և Շանթի դրաման ասես գալիս էր ոգոկոչելու վիատվածներին, նրանց տանելու փոթորկուն կյանքի հորձանուտը:

Դրաման գրվել է 1909-ին՝ 40 օրվա ընթացքում, երբ Շանթը ,քութեշով, հիվանդ փակված էր տանը: Լույս է տեսել 1912-ին Պոլսում: Վերնագիրը սուկ պայմանական է, այնքանով, որքանով հին աստվածները փառաբանում էին կյանքը, գեղեցկությունը, սերը, որոնք բոլոր ժամանակների համար են, ունեն համաշխարհային հնչեղություն. «Հագարամյակ մը մեզմե առաջ»-ի հիշատակումը պարզապես արտաքին պայման է (չնայած առկա է պատմական փաստ. Կոմիտաս եպիսկոպոս, Սյունյաց Վասակ Գաբուն իշխանի կինը՝ Մարիամ իշխանուհին, եկեղեցիների ցայժմ կանգուն լինելը): Քողավորը իշխանադուստր Սեդան է, որին փրկել էր Աբեղան. Նա երազներով լցնում է «ունայնության փոսը»՝ միաժամանակ ժխտելով հոռետեսության գոյության իրավունքը. ի վերջո այդ երազները Աբեղային տանում են կյանքի ծով, քանի որ պատրանքային հանդիպման ժամանակ Աբեղան այլևս ընդունում է հին աստվածների կանչերի պատասխանը: Աբեղան տաղտկալի երազ է համարում մենաստանի կեցությունը՝ Կույրին հիշեցնելով. «Երևե՛կ բաց ըլլային աչքերդ, որ չտեսնեիր». Ուրեմն՝ հաղթում է կյանքը:

3. Հայ գրականության հիվանդ, հանճարեղ պատանին «Տու՛ր ինձի, Տեր...» բանաստեղծությունը անվանել է «Արդի մարդուն Հայր մերը». Բանաստեղծի համար անդառնալի ցավ էր անտարբերությունը մարդու նկատմամբ, նրա տառապանքը, և նա ուզում է՝ Տու՛ր, ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական՝ ժողովել՝ հոգույն մեջ ծերերուն, կույսին, մանկան, պարզմարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին:

Անհուն մարդասիրությամբ լցված՝ Մեծարենցը հաստատում է այն գաղափարը, որ մարդը լիովին երջանիկ կարող է լինել միայն այն ժամանակ, երբ երջանկացնում է ուրիշներին, իր հոգու լույսն ու ջերմությունը բաժանում է «ջուրերուն, անձրևի նման ցողում է դաշտերին, իբրև արև բաշխում է հորիզոններին և Լույսերու նավորդն է դառնում»:

Տերունական աղոթքում մենք Ամենակալ Տիրոջից խնդրում ենք հանապազորդ հաց, խնդրում ենք ներել մեր մեղքերը, խոստանում ենք մենք էլ ներել մեր պարտապաններին, իսկ Մեծարենցը խնդրում է ուրախություն՝ այն բաժանելու համար ուրիշներին: Նրա սերը դուրս է ամեն անձնականից և ծավալվում է ու գրկում բնության բոլոր արարածներին:

4. Ատոմ Յարճանյանը եղեռնազարկ բանաստեղծների շենշող դեմքերից է, Ակնի անտունիներով սնված, որ ապրեց իր ժողովրդի ցավն ու տառապանքը՝ ըմբոստության ու վրեժխնդրության կոչելով: Նրան Սիամանթոն է կոչել Ակնի Ներսիսյան վարժարանի տեսուչ, մեծ բանահավաք Գարեգին Սրվանձտյանը, երբ Ատոմը քրոջ հետ մասնակցել է Սրվանձտյանի կողմից մշակված քրդական «Սիամանթոն և Խջեգարե» ավանդավեպի բեմականացմանը՝ խաղալով Սիամանթոյի դերը:

«Պարը» բանաստեղծությունը ամփոփված է «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուում. Այն մի ցնցող պատկեր է թուրք մարդասպանների գազանային վարքագծի: Բանաստեղծության հերոս գերմանուհին սուկումով պատմում է «մարդուն ոճիրը մարդուն դեմ»: Թուրք բարբարոսները 20 անմեղ

ու գեղեցիկ հայուհիների ստիպում են մերկանդամ պարել մինչև մահ և, որպեսզի «խրախճանքն» ավելի թեժ լինի, քարյուղ են լցնում մերկանդամ հայուհիների վրա ու հրկիզում՝ անհագուրգ հրճվելով դժոխային տեսարանով: Տնցված գերմանուհու բերանով Սիամանթոն անտարբեր աշխարհին է նետում իր զայրույթը՝

Ո՛վ մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ:

Եվ քանի որ երբեք չի լռելու անամոք ցավի մորմոքը, Սիամանթոյի եղերական վախճանից տարիներ անց մի այլ հայրենապաշտ բանաստեղծ՝ Յովհաննես Շիրազը, իր «Յրաշք» բանաստեղծության 2-րդ մասում խոստանում է կատարել հոր պատգամը՝ գերությունից ազատել Մասիսը.

Պիտի ելնեմ աստվածամերձ Մասիս սարի գագաթին,

Որ վրեժիս հրաբուխը թքեմ թուրքի ճակատին:

Նոր դարերի մարգարե, նոր շրջանի Նարեկացի, առնական խիզախության փողհար:

5.2 ուրապի «Երջանիկ մահը» նորավեպը զետեղել է «Կյանքը ինչպես որ է» ժողովածուում: Նորավեպում հոգեբան գրողը քննում է կյանքի ու մահվան, սիրո ու երջանկության, գեղեցիկ ապրելու և գեղեցիկ մեռնելու, կնոջ անհասկանալի, զարմանալի ներաշխարհի ու հոգեբանության հարցերը: Անբուժելի հիվանդ կինը, իմանալով, որ դատապարտված է մահվան, արհամարհում է բժշկի բոլոր նախազգուշացումները և ապրում իր նախընտրած կյանքով: Իր ապրելակերպը նա բացատրում է հետևյալ կերպ. «Դուք, բժիշկներ, կյանքը երկարացնելու աշխատող մարդիկ, կիներուն՝ այս հեք էակներուն կյանքը պահպանելու մի՛ աշխատիք, քանի որ չեք կրնար այդ կյանքը իր թարմության, իր գեղեցկության մեջ անայլայլ ու հաստատ պահել. ճերմակած թափած մազերու, փոթփոթած երեսի, թուլցած միսի մը ավելի կամ նվազ տևողությունը նշանակություն չունի. Կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ լացի փոխվի» և մեռնում է սիրած երիտասարդի թևերի վրա: